Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

102/4198/ 2 հունիսի 2012 շաբաթ

ISSN 1829-2224

Ա

## Բոյկոտն անիմաստ է

Բոյկոտը կարող է լինել քաղաքական պայքարի արդյունավետ միջոց միայն այն դեպքում, երբ ունենում է լայն հասարակական արձագանք եւ գոնե որոշ չափով խոչընդոտում է հակառակորդների ծրագրերի իրագործմանը: Դա տեղի է ունենում, մասնավորապես, այն դեպքերում, երբ որեւէ քաղաքական ուժ զբաղեցնում է ծայրահեղ արմատական, անզիջողական դիրք, հակառակորդների հետ ոչ մի երկխոսությունների ու փոխզիջումների չի գնում եւ կարողանում է մշտապես պահպանել հասարակության լարվածության բարձր աստիճանը: Եթե այդ ամենը չկա, եթե դու այսպես թե այնպես ընդունում ես երկրում ընդունված խաղի կանոնները եւ խաղում ես հենց այդ շրջանակներում, ապա բոյկոտն առանձնապես պտավորություն չի թողնում եւ իր նպատակին չի հասնում:

Դրանով ես, բնականաբար, չեմ ուզում ասել, որ երկխոսելը, փոխզիջումներ գտնելը եւ «համակարգային» ընդդիմություն լինելը սխալ բան է: Հատկանշական է, որ նույնիսկ «Սարդարապատ» շարժումը հրապարակայնորեն կոչ չի արել բոյկոտել Ազգային ժողովի ընտրությունները. շատ ճիշտ կանխատեսելով, թե ինչպես են դրանք անցնելու, այդ նախաձեռնության անդամները, ըստ երեւույթին, հասկանում էին, որ այդ բոյկոտը ոչինչ չի տա, եւ նման կոչերը կլինեն օդի պարզ ցնցում:

ՀԱԿ-ը եւ «Ժառանգությունը» շատ ճիշտ որոշում ընդունեցին՝ մասնակցելով Ազգային ժողովի ընտրություններին, նույնքան օրինաչափ էր մանդատներից չհրաժարվելը, վերցնել դրանք հանդիսավոր կամ ոչ հանդիսավոր պայմաններում զուտ տեխնիկական խնդիր է եւ սկզբունքային նշանակություն չունի: Այսքանից հետո խորհրդարանի աշխատանքներին չմասնակցելը տրամաբանական չի թվում: Այդ կուսակցություններին ձայն են տվել տասնյակ հազարավոր մարդիկ, եւ ենթադրելի է, որ դա նրանք արել են, որպեսզի իրենց պատգամավորները, պատգամ փոխանցողները ներկայացնեն իրենց՝ քաղաքացիների շահերը: Չկատարել այդ պատգամները՝ սպասելով, որ ավազակապետությունն ինքն իրեն կկազմաքանդվի, կամ՝ որ սարերն իրենք իրենց կշարժվեն, ամենաճիշտ լուծումը չէ:

Գուցե հարգարժան ընդդիմադիր պատգամավորները կառարկեն, որ նոր գումարման ԱԺ նիստերի առաջին օրերին կարեւոր հարցեր չեն քննարկվում: Բայց դա էլ, երեւի, այդպես չէ: Օրինակ՝ Դաշնակցության ներկայացուցիչները, կարծում եմ, շատ ճիշտ արեցին, որ իրենց կարծիքն արտահայտեցին ԱԺ հանձնաժողովների ձեւավորման խնդրի շուրջ: Այստեղ իսկապես պետք էր ավելի լայն իրավասություններ տալ ընդդիմությանը (բնականաբար, ոչ միայն ՀՅԴ-ին): Այլընտրանքային տեսակետը հնչեցնելն արդեն քիչ բան չէ, նույնիսկ այն դեպքում, եթե պարզ է, որ այդ կարծիքի հիման վրա որոշում չի ընդունվի:

Մոտակա մի ամսում ձեւավորվելու է կառավարությունը, այնուհետեւ երկրի գործադիր մարմինը ներկայացնելու է իր ծրագիրը: Ինձ, օրինակ, հետաքրքիր է, թե ինչ է այս ծրագրի վերաբերյալ ասելու Հրանտ Բագրատյանը՝ ոչ թե, ասենք, «Առավոտ» թերթին տված հարցազրույցում, այլ որպես պատգամավոր, որպես օրենսդիր: Կամ՝ երբ արտգործնախարար Նալբանդյանը ելույթ է ունենալու որեւէ արտաքին քաղաքական խնդրի շուրջ, էական է, թե ինչ են նրան հարցնելու պատգամավորներ Ալեքսանդր Արզումանյանը, Վարդան Օսկանյանը եւ Րաֆֆի Հովհաննիսյանը: Պառլամենտը նաեւ դրա համար է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Իմիջը շատ դժվար է ենթարկվում մոդիֆիկացիայի»



Երեկ Քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը Aravot.am-ի հարցին՝ Ռոբերտ Քոչարյանին կհաջողվի՞ նույն խաղաքարտը խաղացնել՝ հաշվի առնելով, որ նրան ժողովուրդը տեսել է, ճանաչում է՝ պատասխանեց. «Ասում են՝ մարդու բջիջները փոխվում են յուրաքանչյուր օր»: Պարոն Հովհաննիսյանին փորձեցինք ճշտել՝ այսինքն՝ մտածում եք, որ նա այս տարիների ընթացքում փոխվա՞ծ պիտի լինի: Նա պատասխանեց. «Դա բոլորին է վերաբերում, բոլորն էլ փոխվում են: Բայց վերաբերմունքը չի փոխվում, վերաբերմունքը շատ կարծր է: Երբ ձեւավորվում է քաղաքական գործչի համար մի պատկեր, մի իմիջ, այդ իմիջը շատ դժվար է ենթարկվում մոդիֆիկացիայի»: Սակայն ըստ քաղաքագետի. «Միաժամանակ, կա ժամանակի գործոնը, կյանքի որակի վատթարացման գործոնը, եւ եթե նա վերադառնա ակտիվ քաղաքականություն՝ հարց է, թե ինչպես կներկայանա, ու ինչպես դա կընդունվի հասարակության կողմից»:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Պատերազմի վերսկսումը պետք չէ բացառել»

«Պատերազմի վերսկսումը երբեք պետք չէ բացառել»,- երեկ հայտարարեց ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյանը եւ մանրամասնեց. «Նավթը խաղաղություն է սիրում, պատերազմի դեպքում նավթի օրինանքը կդառնա անեծք: Մյուս կողմից էլ՝ Ադրբեջանը պատրաստ չէ պատերազմի, այն վստահ չէ, որ կհաղթի: Սակայն խելահեղ զինումն ու սպառազինումը եւ այն հայտարարությունները, որ լսում ենք Ադրբեջանի ղեկավարության կողմից, զինադադարի այն խախտումները, որ Ադրբեջանը կատարում է՝ կարող են պատերազմի վերսկսման առիթ դառնալ՝ անգամ անկախ Ադրբեջանի կամքից»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

### Ձերբակալվել է ոստիկանության գնդապետ

Երեկ ՀՀ ԱԱԾ մարմինների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կաշառք ստանալու պահին ձերբակալվել է ՀՀ Ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության Երեւանի հաշվառման-քննական բաժնի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արսեն Կյուրեղյանը: ԱԱԾ մամուլի կենտրոնի հաղորդմամբ՝ վերջինս առանց համապատասխան քննություններին մասնակցելու, վարորդական իրավունքի վկայական հատկացնելու դիմաց, օրենքով սահմանված վճարումներից բացի, քաղաքացուց պահանջել եւ ստացել է 150 հազար դրամ: Փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը կատարում է ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունը:

### Հրաժարական է տվել Գեղարքունիքի մարզպետը

Գեղարքունիքի ԲՀԿ-ական մարզպետ Նվեր Պողոսյանը հրաժարականի դիմում է ներկայացրել վարչապետին՝ շնորհակալություն հայտնելով համատեղ աշխատանքի համար: Նվեր Պողոսյանը Գեղարքունիքը ղեկավարում էր 2007 թվականից: Նա նախկին ոստիկան է: ԲՀԿ-ական մյուս մարզպետ Սերգեյ Բագրատյանը, ով ղեկավարում է Վայոց ձորի մարզը, ամենայն հավանականությամբ, հրաժարական կներկայացնի երկուշաբթի: «Ա1+»-ի թղթակցի հետ զրույցում նա ասել է, որ ինքն էլ է թողնում պաշտոնը՝ չնայած մամուլում տարածված լուրերին, թե չի լքելու պաշտոնը՝ հայտարարելով, թե ինքը նախագահի մարդն է: «Դա էդ թերթն է ասել, ես ի՞նչ կապ ունեմ դրա հետ: Իմ հրաժարականը կատարված փաստ է»,- ասել է Բագրատյանը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Համագումար

Այսօր, ժամը 12-ին, Գրողների միության դահլիճում տեղի կունենա «Ժառանգության» 8-րդ համագումարը:

### Եղանակ

Երեւան +13 +26, Շիրակ +3 +18, Կոտայք +3 +18, Գեղարքունիք +3 +18, Լոռի +6 +20, Տավուշ +8 +23, Արագածոտն լեռներ +3 +18, Արագածոտն նախալեռն. 10 +25, Արարատ +12 +27, Արմավիր +12 +27, Վայոց Ձոր լեռներ +3 +18, Վայոց Ձոր նախալեռն. +12 +27, Սյունիքի հովիտներ +10 +27, Սյունիքի նախալեռներ +5 +20, Արցախ +9 +23

## «Արհեստածին ինտրիգներ են սարքում ԲՀԿ-ի շուրջ»



ԲՀԿ-ի՝ կոալիցիայից դուրս գալու հետ կապված՝ Aravot.am-ի հետ զրույցում, ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանից հետաքրքրվեցինք, թե իր կարծիքով՝ այս բոլոր խոսակցությունները՝ ԲՀԿ-ի քայլը ազնիվ էր, ազնիվ չէր, ե՞րբ կավարտվեն: Նա պատասխանեց. «Երբ լրագրողների հետաքրքրությունը եւ ինտրիգներ սարքելու տարբեր լրատվամիջոցների հետաքրքրությունը մարի, եւ հասկանան, որ ԲՀԿ-ն արել է իր շատ ազնիվ քայլը: Արել է քայլ, որի ետեւում կանգնած է ժողովուրդը, եւ «Բարգավաճ Հայաստանը» խորհրդարանում շարունակելու է աշխատել հանուն մեկ նպատակի՝ դա ժողովրդի շահն է: Քանի դեռ տարբեր լրատվամիջոցներ փորձում են տարբեր ինտրիգներ տեսնել, տարբեր սցենարներ տեսնել, տարբեր վարկածներ շրջանառել ԲՀԿ-ի գործողությունների եւ քայլերի վերաբերյալ, իհարկե, այս ամենը չի դադարի: Ես կարծում եմ, որ դրանք ավելի շատ արհեստածին ինտրիգներ են, ավելի շատ պարապ ժամանակի եւ պարապ մարդկանց ինտրիգներ են, քան լուրջ քաղաքական վերլուծություններ: Համենայնդեպս, ես ինքս, որպես նախկին լրագրող, ԲՀԿ-ի քայլերի վերաբերյալ որեւէ լուրջ քաղաքական վերլուծության չեմ հանդիպել: Ցավում եմ, որ մեր լրագրողական դաշտն իջել է մանր ինտրիգների եւ տարբեր գործիչների կողմից հրահրվող անհետաքրքիր սադրանքների դաշտը: Ինձ հետաքրքիր չի կարդալ այդ հոդվածները»:

## Բիշարյանը հաստատում է, որ ընտրակաշառքներ եղել են

Aravot.am-ը ՕԵԿ փոխնախագահ Հեղինե Բիշարյանից հետաքրքրվեց՝ Դուք կիսո՞ւմ եք ձեր պատգամավորի հայտնած այն տեսակետը, որ առավելագույն ձայներ հավաքած քաղաքական ուժերը ընտրակաշառք են բաժանել, դրա համար էլ ՕԵԿ անդամների մի մասը գայթակղվելով՝ իրենց չի ընտրել: Հիշեցնենք, որ իր վերջին ասուլիսում այդպիսի հայտարարություն էր արել ՕԵԿ պատգամավոր Իշխան Խաչատրյանը:

Հեղինե Բիշարյանը պատասխանեց. «Իշխան Խաչատրյանը խոսել է որպես մեծամասնական թեկնածու՝ իր ընտրատարածքում, եւ նա ասել է այն, ինչ տեսել է»: Մեր հարցին՝ դա չի՞ տարածվում կուսակցության կարծիքի վրա, տիկին Բիշարյանը պատասխանեց՝ ոչ. «Ինքը խոսել է եւ ներկայացրել իր կարծիքը: Բայց ես՝ որպես նույնպես մեծամասնական ընտրակարգով թեկնածու, պետք է ասեմ, որ այո՛, ընտրակաշառքներ եղել են, ո՞վ է զարմանում դրա վրա, կա՞ զարմացող»:

Հ. ՁԵԲԵՋՅԱՆ

## «Ժառանգությունը» կվերանայի՞ վարչության կազմը

Aravot.am-ի տեղեկություններով՝ այսօր կայանալիք «Ժառանգություն» կուսակցության համագումարում կվերանայվի կուսակցության վարչության կազմը: Թե հատկապես ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում՝ ճշտել չհաջողվեց: Կուսակցությունում բոլորը խուսափում էին այսօր կայանալիք համագումարի հետ կապված որեւէ հարցի պատասխանել կամ որեւէ մեկնաբանություն անել: Ինչ-որ բան ճշտելու մեր բոլոր փորձերն ավարտվում էին հետեւյալ նախադասությամբ. «Համագումարը կլինի, ինչ որոշումներ կլինեն, ըստ այդմ էլ՝ հետո կխոսենք, մեկնաբանություններ կանենք»:

# «ԲՀԿ-ն ծանրաձողի վրա նստած թիթեռն է»

Քաղտեխնոլոգ Կարեն Քոչարյանն ու Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Մանվել Սարգսյանը օրինաչափ են համարում այն, որ ՀՀԿ-ին այլընտրանք լինելու հայտ ներկայացրած ԲՀԿ անդամները մայիսի 31-ին քվեարկեցին հօգուտ ԱԺ նախագահի ՀՀԿ-ական թեկնածու Հովիկ Աբրահամյանի: Կարեն Քոչարյանը դա բացատրում է զուտ մարդկային, խնամիական հարաբերություններով, իսկ Մանվել Սարգսյանը՝ իշխանական ճգնաժամով: Քաղաքագետների ԴԵՄ ԱՌ ԴԵՄ բանավեճն ամբողջությամբ կարող եք դիտել aravot.am կայքում:

Մանվել Սարգսյան- Այդ տնավարի մոտեցումն իր տրամաբանության մեջ է: Այստեղ մենք տեսնում ենք այլ սկզբունքներ, դրանք այն սկզբունքները չեն, որոնք պետք է ունենան քաղաքական ուժերը: Մենք տեսնում ենք մի ուժ, որը հայտարարում է, թե ունի մեծամասնություն, բայց եթե ունի, ապա այդ ուժն է ձեւավորում իշխանություն եւ ընդհանրապես չի խոսում կոալիցիաների մասին: Սակայն բոլորը փայլուն հասկանում են, որ այս երկրում չկա ազատ ընտրությունների մեխանիզմ, բոլորը գիտեն, թե ոնց են այդ մանդատները ձեռք բերվում եւ ինչպիսին է ուժերի ոչ թե նկարած, այլ ռեալ հարաբերակցությունը: Ինչ է պատահում այն ուժերի հետ, որոնք ունենալով մեծամասնություն՝ փորձում են անգամ մի «պստիկ» ուժի հետ, ինչպիսին «Օրինաց երկիրն» է, կազմել կոալիցիա: Դրա նպատակը ո՞րն է: Եթե մենք այս հարցին պատասխանենք, կհասկանանք, թե ինչ է կատարվում այս երկրում:

«Առավոտ»- Պարոն Քոչարյան, Ձեր գնահատմամբ՝ ո՞րն էր ՕԵԿ-ի հետ կոալիցիա կազմելու՝ ՀՀԿ-ի դրդապատճառը:

Կարեն Քոչարյան- Ինձ համար դա անհասկանալի է, որովհետեւ ես արդեն ասել եմ՝ մեռած ուժի հետ կոալիցիա չեն կազմում, մեռած ուժին կամ թաղում են, կամ զմռսում պատի մեջ: Երեւի դա էլի նույն մարդկային հարաբերություններից է գալիս, զուտ նրանից, որ 2008թ. Արթուր Բաղդասարյանը պաշտպանեց, միացավ (Սերժ Սարգսյանին- Ա. Ս.): Ես կարծում եմ՝ դա է, պարտք էր՝ տվեցին: Թե չէ՝ «Օրինաց երկիր»՝ այնտեղ արդեն ուժ չկա:





«Առավոտ»- Դուք ասում եք՝ ուժ չկա, սակայն այդ «չեղած» ուժն, այնուամենայնիվ, երեք նախարարական պորտֆել է ստանալու եւ իշխանության մեջ ոչ փոքր բաժին է ունենալու:

Կ. Քոչարյան- Այդ երեք նախարարական պորտֆելները դեռեւս մինչեւ ընտրությունները ՕԵԿ-ինը չէին, որովհետեւ այդ երեք նախարարներն էլ ՕԵԿ-ի հետ այնքան կապ ունեին, որքան ես, ասենք, օպերային երգիչ եմ: Նույնն էլ հիմա կլինի, այսինքն՝ երեք նախարարներն էլ ՕԵԿ-ի հետ ոչ մի կապ չեն ունենա:

«Առավոտ»- Ձեր կարծիքով՝ ի՞նչ էր ուզում ասել Սերժ Սարգսյանը՝ ԱԺ-ին ուղղված իր ողջույնի խոսքում հիշատակելով սխալ նպատակների ու միջոցների մասին: Այդ ակնարկի միակ հասցեատերը «Բարգավաճ Հայաստա՞նն» էր:

Մ. Սարգսյան- Ինչ միջոց, ինչ նպատակ: Պարզ ու հստակ էր, որ պիտի լինի կոալիցիա, որի կենտրոնում պիտի լինի 2013թ. նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանին պաշտպանելը: Բայց՝ չեղավ: Սերժ Սարգսյանը ունի մի խնդիր, որը պիտի որ չունենար, եթե իսկապես իրենք մեծամասնություն ունեն: Բայց ինքը փայլուն հասկանում է, թե դա ինչ մեծամասնություն է, այդտեղ մեծամասնություն չկա: Ինչ-որ մի իշխանական ճամբար է պետք, որը պետք է իրեն «բրթի» իշխանության: Այս ամենը շատ պարզ է, նաեւ պարզ է, թե Հովիկ Աբրահամյանն ինչու է եկել-նստել այդ աթոռին: Այսինքն՝ երբ քաղաքական համակարգը չի ձեւավորվում սահմանադրական նորմերի հիման վրա, երբ մարդիկ իրենց ազատ կամքը չեն արտահայտում, եւ ուժերի հարաբերակցությունն այն չէ, ինչ որ արդեն նկարված է, ստեղծվում է այս ստվերային պայմանավորվածությունների ոլորտը, որտեղ արդեն էլ ճիշտ ու սխալ չկա:

«Առավոտ»- Ստվերային պայմանավորվածությունների հետ կապված՝ հնարավոր համարո՞ւմ եք, որ ԲՀԿ-ի ժամանակավոր «ընդդիմադիրացումը» հենց այդպիսի պայմանավորվածության արդյունք է, որի նպատակը գալիք նախագահական ընտրություններից առաջ ընդդիմադիր դաշտը վերահսկելի դարձնելն է:

Կ. Քոչարյան- Ես չեմ շտապում ասել՝ խաղ է դա, թե ոչ: Բայց եթե անգամ դա խաղ է, ապա այդ նույն խաղը ԲՀԿ-ի հետ միասին խաղացել են նաեւ ընդդիմադիրները՝ ՀԱԿ-ը եւ Դաշնակցությունը՝ միասնական շտաբ ստեղծելով: Ու եթե նրանք խաղացել են այդ խաղը, հիմա ումի՞ց են ինչ պահանջում:

Մ. Սարգսյան- ԲՀԿ-ն ինչ-որ տեղ քաղաքական փուչիկ է, որը եւ միասնական շտաբն է փչել, եւ իշխանությունները: Իշխանությունները փչել են, որ մնացած կուսակցություններին մի կողմ քաշեն՝ թողնեն 5-7 տոկոսի հույսին, եւ բոլոր ձայները բերեն այստեղ: Ընդդիմությունն էլ որոշել է, որ իրենք նույնը կարող են անել՝ իշխող կուսակցությունից ձայներ խլելով նման ձեւով: Հիմա երկուսով փչել են այդ փուչիկը, եւ երկուսն էլ մնացել կրակի մեջ: Բայց քաղաքականության մեջ ամեն ինչը շատ մեծ ուժ ունի, փուչիկն էլ է ուժ դառնում: Եվ այսօր ԲՀԿ-ն է որոշում՝ ում հետ ոնց ուզի, այդպես էլ կխոսի, ում հետ ուզի՝ նրա հետ էլ կաշխատի: Կուզի՝ Պուտինի հետ կաշխատի, ինչը ոնց որ թե երեւում է: Եվ նրանց ոչ ոք ոչինչ չի կարող ասել՝ ուշ է, արդեն փչել են փուչիկը:

«Առավոտ»- Այսպիսով՝ կարելի՞ է ասել, որ կոալիցիա չկազմելով՝ ԲՀԿ-ն շահեկան դիրքում հայտնվեց՝ որոշիչ գործոն դառնալով միաժամանակ եւ ընդդիմադիր, եւ իշխանական դաշտում:

Կ. Քոչարյան- Իհարկե, կարելի է այդպես ասել:

Մ. Սարգսյան- Այո, կարծում եմ, որ դա այդպես է: Այստեղ ծանրաձողի վրա հայտնված թիթեռի իրավիճակն է ստեղծվել, երբ թիթեռն իրենից ոչինչ չի ներկայացնում, բայց, այդուհանդերձ, նա է որոշում ծանրության կենտրոնը:

Բանավեճը վարեց
ԱՐԵՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Նախագիծն իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ծրագրի շրջանակներում:

# Զատուլինի դերը ծայրահեղ հայտարարություններ կատարե՞լն է

Aravot.am-ը ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար **Կիրո Մանոյանի** հետ զրույցում խնդրեց մեկնաբանել Կոնստանտին Զատուլինի՝ օրեր առաջ կատարած այն հայտարարությունը, ըստ որի՝ ԼՂՀ հարցի կարգավորումը փակուղուց դուրս չի էլ եկել: Կ. Մանոյանը նկատեց. *«Այն առումով, որ հարցը չի կարգավորվել, եւ կարգավորման գործընթացում կողմերի կեցվածքների մեջ հստակ փոփոխություն չկա, այս իմաստով կարելի է ասել՝ փակուղի: Սակայն դա չի նշանակում, որ մենք այլ քայլեր չպիտի ձեռնարկենք: Ընդհակառակը՝ պետք է քայլեր ձեռնարկել ԼՂՀ միջազգային ճանաչման առումով, բանակցային գործընթացում ավելացնել ԼՂՀ-ի լիիրավ մասնակցությունը: Ուստի ասել, որ բանակցությունները ոչ մի դրական արդյունք չեն տվել, ճիշտ չէ, քանի որ կարծում եմ՝ 1994-ից ի վեր պատերազմ տեղի չունենալը բանակցությունների հետեւանքն է նաեւ»:*

Կ. Մանոյանը Զատուլինի հայտարարության մեջ ենթատեքստ չի տեսնում եւ նշում է. *«Վստահ չեմ, որ Զատուլինի հայտարարություններն անպայման ենթատեքստ ունեն: Տպավորությունս այն է, որ նա ծայրահեղ հնչեղ հայտարարություններ անելու պարտականություն ունի, բայց դա չի նշանակում, որ նրա հայտարարությունները ՌԴ իշխանության կեցվածքի արտահայտությունն են: Ուղղակի ՌԴ իշխանություններն ուզում են ՆԱՏՕ-ի եւ մի քանի այլ հարցերի կապակցությամբ ծայրահեղ հայտարարություններ հնչեցնել, բայց դա չի նշանակում, որ իրենք այդ կարծիքին են»:*

Իսկ Զատուլինի այն հայտարարության մասին, թե անգամ ՀՀ-ն չի ճանաչել ԼՂՀ անկախությունը, ի՞նչ եք պահանջում ՌԴ-ից՝ պարոն Մանոյանն ասաց. *«Չեմ կարծում, որ դա ՌԴ իշխանության կեցվածքին հարազատ արտահայտություն է, բայց ուզել են նաեւ այդ տեսակետը հնչեցնել: Իրականում, եթե աշխարհում քառասուն պետություն ԼՂՀ-ի հետ ունենա այն հարաբերությունները, որ ունի ՀՀ-ն, ապա ԼՂՀ միջազգային ճանաչումը երաշխավորված է: Ճիշտ չէ նաեւ ասել, որ ՀՀ-ն լրիվ ճանաչել է ԼՂՀ անկախությունը, քանի որ իրականում ինչ-որ տեղ տակավին կան քայլեր, որ ՀՀ-ն դեռ կարող է անել, չնայած նման քայլերը կհակասեն ՀՀ Սահմանադրությանը, քանի որ ՀՀ անկախության մասին հռչակագրում խոսվում է միացման որոշման մասին: ՌԴ իշխանություններն ուզեցին ինչ-որ բան ասել մեզ հրապարակավ՝ ասեցին, բայց թող Ռուսաստանը մեր չափ ճանաչի, ոչինչ, շատ ճանապարհ կկտրենք, քանի որ այդ դեպքում Ադրբեջանը չի կարող պատանդ պահել այս բանակցությունները»:*

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա aravot daily
ՇԱԲԱԹ 2.06.2012

# Այսօր կորոշվի՞ վարչապետի հարցը

## ՀՀԿ ԳՄ-ն եւ խորհուրդն այսօր հերթական նիստը կգումարեն

Թեեւ նախատեսվում էր, որ կառավարության հարցը ՀՀԿ գործադիր մարմինը եւ խորհուրդը քննարկելու են հունիսի 10-ից հետո, բայց երեկ երեկոյան հանրապետական վերնախավին զգուշացվել է, որպեսզի քաղաքից չբացակայեն, քանի որ այսօր կայանալու է գործադիր մարմնի եւ խորհրդի նիստ: Հիշեցնենք, որ սահմանված կարգով գործող կառավարությունն արդեն իսկ հրաժարական է ներկայացրել, սակայն նախարարները կշարունակեն պաշտոնավարել՝ մինչեւ նոր կառավարության ձեւավորումը: Տեղեկացնենք, որ նախագահը նոր վարչապետին պետք է նշանակի տասնօրյա ժամկետում, իսկ կառավարությունը կազմավորվելու է վարչապետի նշանակումից հետո 20-օրյա ժամկետում: Սրանից հետո էլ, համաձայն ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի, «Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ եւ քվեարկության դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում»:

«Առավոտի» հետ զրույցում ՀՀԿ գործադիր մարմնի անդամ, ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը պատասխանելով հարցին՝ այսօր արդեն կհստակեցվի՞ նոր կառավարության կազմը, պատասխանեց. «Ես կարծում եմ, որ գործընթացները կգնան նախ՝ վարչապետի պաշտոնի հստակեցման առումով»: Հաջորդ հարցին՝ հնարավո՞ր է վարչապետի փոփոխության հարց քննարկվի, մեր զրուցակիցն ասաց. «Չեմ կարծում, որ իմաստ ունի այսօր այդ մասին խոսել»: Հիշեցնենք, որ ՀՀԿ մամուլի խոսնակ, ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովն ավելի վաղ հայտարարել էր, որ վարչապետը լինելու է ՀՀԿ-ից ու հրապարակելով իր անձնական կարծիքը՝ հստակեցրել, որ Տիգրան Սարգսյանն, ամենայն հավանականությամբ, կշարունակի պաշտոնավարել: Գագիկ Մինասյանից հետաքրքրվեցինք՝ կուսակցական շրջանակներում ի՞նչ խոսակցություններ կան՝ նախարարական կազմը շա՞տ կփոխվի, թե՞ գործող նախարարները կշարունակեն պաշտոնավարել: «Ես այդպիսի խոսակցությունների չեմ մասնակցել եւ չեմ կարծում, որ բամբասանքները արժանի են նման բարձր մակարդակի թերթում երեւալու»,- ասաց նա:


ARMENIAN Photo

ԲՀԿ-ի՝ կոալիցիայից հրաժարվելուց հետո կառավարական բոլոր պորտֆելները բաժին կհասնեն ՀՀԿ-ին: ՀՀԿ մամուլի խոսնակը ԳՄ եւ խորհրդի նախորդ նիստից հետո հաստատեց, որ ՕԵԿ-ը պահպանելու է իր երեք պորտֆելները: Դրանք ավելացնելու հավակնություններ ՕԵԿ-ում չեն դրսեւորել, ՀՀԿ-ն էլ նման առաջարկով չի դիմել ՕԵԿ-ին: Սակայն ՀՀԿ-ն եւ ՕԵԿ-ը «կփոխանակվեն» նախարարական պորտֆելներով: Aravot.am-ի ունեցած տեղեկություններով՝ ՀՀԿ-ն ՕԵԿ-ից կվերցնի տրանսպորտի եւ կապի նախարարությունը, փոխարենը ՕԵԿ-ին կտրվի ԲՀԿ-ի թողած՝ աշխատանքի եւ սոցիալական ապահովության կամ քաղաքաշինության նախարարությունը: Արտակարգ իրավիճակների եւ գյուղատնտեսության նախարարությունները կմնան ՕԵԿ-ին: ՕԵԿ փոխնախագահ Հեղինե Բիշարյանը «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում կարծիք է հայտնել, որ արտակարգ իրավիճակների եւ գյուղատնտեսության նախարարները, ամենայն հավանականությամբ, կպահպանեն իրենց տեղերը: Ավելի վաղ ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովն էլ անդրադառնալով ՀՀԿ-ական նախարարների փոփոխության հարցին՝ ասել էր, որ «լուրջ փոփոխություններ սպասել պետք չէ»:

Ըստ տարածված լուրերի՝ ԲՀԿ-ական նախարարների հրաժարականից առաջացած «բացերը» լրացնելու են ԱԺ նախկին նախագահ Սամվել Նիկոյանը, ԱԺ նախկին պատգամավոր Վիկտոր Դալլաքյանն ու Երեւանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը: Նույն լուրերի համաձայն՝ Սամվել Նիկոյանին վստահվելու է բնապահպանության նախարարի աթոռը: Ի դեպ, նրա նախկին տեղակալ՝ ԲՀԿ-ական Սամվել Բալասանյանն էլ Ազգային ժողովում կզբաղվի բնապահպանությամբ՝ կգլխավորի գյուղատնտեսական եւ բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովը: Առողջապահության նախարարի թափուր պաշտոնի համար շրջանառվում է ՀՀԿ ԳՄ անդամ, Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռեկտոր Դերենիկ Դումանյանի անունը:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ԲՀԿ-ն չի կրկնելու ՕԵԿ-ի սինդրոմը

### Ըստ Լարիսա Ալավերդյանի՝ ԲՀԿ-ն գնալու է ավելի վատ գործընթացի

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության դիրքորոշումը՝ ոչ թե ընդդիմություն, այլ այլընտրանք իշխանությանը, «Ժառանգություն» կուսակցության նախկին պատգամավոր Լարիսա Ալավերդյանի համոզմամբ՝ խորամանկ քայլ է: «Հասարակությունը պետք է պատրաստ լինի ամենատարօրինակ սցենարների: Այսինքն՝ հանդես գալով թեկուզ անկեղծ հայտարարություններով, բոլոր դեպքերում, խորքային առումով ԲՀԿ-ն չկարողանա ակնթարթի մեջ դառնալ հասարակական շահի կրող»,- Aravot.am-ին ասաց տիկին Ալավերդյանը:

Մեր հարցին, թե իրենց այլընտրանք կոչելով՝ մեծանո՞ւմ է հավանականությունը, որ, լուրերի համաձայն, 6 ամիս անց կրկին կմտնեն կոալիցիա, տիկին Ալավերդյանն ասաց. «Այլընտրանք մնալու ու կոալիցիա մտնելու արանքում գունապնակի մեջ կան շատ-շատ տարբերակներ. կամ հասարակությունը այդպես էլ անտեղյակ է մնալու, կամ միայն մասնակի է տեղյակ լինելու, թե ինչպիսին են իրականում այն խորքային հարաբերությունները, գործընթացները»:

Տիկին Ալավերդյանը կարծում է՝ 6 ամսից հետո կտրուկ փոփոխություններ տեղի չեն ունենա. «Կլինեն խորքային, հնարավոր է՝ բավականին բարդ բանակցություններ»:

Նա մանրամասնեց, որ խոսքը նախագահի թեկնածության մասին է, իսկ ԲՀԿ թեկնածուի ամենահավանական տարբերակը տիկին Ալավերդյանը գործող նախագահի թեկնածությունը սատարելն է համարում. «Բանակցությունների ընթացքում կօգտագործվեն իրականում գոյություն ունեցող որոշ փաստարկներ, որոնք կապված են տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական խնդիրների հետ, չի բացառվում, որ կկարողանան գալ ինչ-որ հայտարարի»: Բայց տիկին Ալավերդյանը կարծում է, որ ԲՀԿ-ն չի կրկնելու ՕԵԿ-ի սինդրոմը՝ գնալու է ավելի վատ գործընթացով:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

## ԵԱՀԿ դիտարկումից մեկ օր անց գյուղացի է վիրավորվել

Երեկ առավոտյան Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի Ներքին Կարմիրաղբյուր գյուղում ադրբեջանական հենակետից արձակված կրակոցի հետեւանքով աջ ոտքից վիրավորվել է 1960թ. ծնված Վաչիկ Մելքումյանը:

Ներկայումս նրա առողջական վիճակը բարվոք է, Վաչիկը բուժվում է Բերդ քաղաքի զինվորական հոսպիտալում: Ներքին Կարմիրաղբյուրի գյուղապետ Մանվել Կամենդատյանի վկայությամբ՝ Վաչիկը վիրավորվել է, երբ սահմանամերձ գոտում, Այգեպարի գինու գործարանի ետեւի մասում գտնվող իր խաղողի այգին էր մշակում: Հիշեցնեմ, որ նախորդ օրը՝ մայիսի 31-ին, սահմանի նույն հատվածում՝ Այգեպար գյուղի մերձակայքում, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի կողմից անցկացվել է հայ-ադրբեջանական սահմանագծի հերթական դիտարկումը, որին մասնակցել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրշիկը:

Մ. Կամենդատյանն ասաց, որ ինքը ներկա է եղել այդ դիտարկմանը: Նրա վկայությամբ՝ իրենց գյուղն ամբողջությամբ գտնվում է ադրբեջանական նշանառության տակ, ադրբեջանցիները չեն խորշում կրակ բացել գյուղի դպրոցի եւ մանկապարտեզի վրա: Գյուղապետն ասաց, որ ադրբեջանցիների գնդակոծությունների պատճառով գյուղացիները վախենում են մշակել իրենց այգիները, մի մասը իր այգին անմշակ է թողել, ոմանք էլ ստիպված ծառերն են կտրել: Գյուղապետը, սակայն, հավաստիացրեց, որ սահմանամերձ Ներքին Կարմիրաղբյուրի, իր խոսքերով, «հայրենասեր մարդիկ» չեն լքում գյուղը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Մանդատը չէ, որ Մավրին պետք է գեղեցկացնի»

Միասնական շտաբում «քավորը»՝ Քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը, պարբերաբար աստվածացնում էր ԲՀԿ-ին, նրա ղեկավարին, լրագրողների բերանները «փակում», երբ տրակտորներից հարց էին տալիս, իսկ Գագիկ Ծառուկյանի մասին խոսում էր ընդգծված պաշտամունքով: Մանդատը չստանալուց հետո այդ ամենն անհետացել է: Երեկ Aravot.am-ի հետ զրույցում երբ հիշեցրինք ԲՀԿ-ին աստվածացնելու մասին՝ Հմայակ Հովհաննիսյանը չհամաձայնեց. «Ընդհակառակը՝ գրել էին, որ ես ասել եմ՝ Գագիկ Ծառուկյանն Աստված չի, դրա համար նա իմ վրա ջղայնացել էր: Չնայած դրանք ասեկոսեներ են, ես նման արտահայտություն ինձ թույլ չեմ տվել, որովհետեւ ես աստվածապաշտ մարդ եմ, ես ընդհանրապես որեւէ մահկանացուի Աստծո հետ չեմ համեմատում: Դա աստվածապաշտ մարդու համար անընդունելի է»:

Ինչ վերաբերում է ԲՀԿ-ի անունը տալուց դողալուն՝ պարոն Հովհաննիսյանի մեկնաբանությամբ. «Ես թիմի անդամ եմ, ես պարկեշտ մարդ եմ: Եթե համաձայնվել եմ այդ թիմում ընդգրկվել, պետք է անպայման այդ թիմին օգուտ բերեմ. դա պարկեշտության չափանիշ է: Եթե ես աշխատում եմ, բոլոր տեղերում, որտեղ ես համագործակցել եմ քաղաքական թիմերի հետ, ում հետ համագործակցել եմ՝ ես դրանց օգուտ եմ բերել, շա՜տ մեծ օգուտ եմ բերել»:

Մեր հարցին՝ հիմա Ձեր օգուտը ո՞րն է եղել ԲՀԿ-ին՝ Հմայակ Հովհաննիսյանը պատասխանեց. «Պլյուս 15%: Որովհետեւ հիշո՞ւմ եք, երբ Դաշնակցությունը դուրս եկավ կոալիցիայից, մինչեւ 2008-ի ընտրությունները 10 ամիս կար: 10 ամսվա ընթացքում չկարողացավ իր համար ձեւավորել ընդդիմադիրի իմիջ: Դա շատ դժվար բան է: Ես հիմա 2 ամսվա ընթացքում արեցի այն, ինչը Դաշնակցությանը չհաջողվեց»: Հարցին՝ գոնե շնորհակալություն հայտնեցի՞ն Ձեր «ներդրած» 15% ձայնի համար՝ նա պատասխանեց. «Գիտեք, երբ ես իմ մասնագիտական գործն անում եմ եւ որակով եմ անում, հանրությունը տեսնում է՝ դա ամենամեծ շնորհակալությունն է: Այ, երբ որ ընդունում եք, թե ես ինչ ուժեղ պոլիտոլոգ եմ, դա է իմ շնորհակալությունը»:

Մենք հիշեցրինք՝ Դուք մինչ ԲՀԿ ցուցակում հայտնվելը՝ պարբերաբար հայտարարում էիք, որ երբ Գագիկ Ծառուկյանը հրավիրի՝ կգնաք, Դուք ուզում էիք մտնել ԲՀԿ ցուցակ՝ նա պատասխանեց. «Գագիկ Ծառուկյանը 5 տարի է՝ ինձ հրավիրում է: Ասում էր՝ 5-րդ տեղը բրոնյա ա, կուզենաս՝ կհամաձայնվես, չես ուզենա՝ չես համաձայնվի, բայց իմացի, որ ես քեզ հրավիրել եմ»: Մեր հարցին՝ բա ի՞նչ եղավ, որ Դուք ուզում էիք, նա հրավիրում էր, բայց չկաք ԱԺ-ում՝ նա պատասխանեց. «Մավրը արեց իր գործը, մավրը համարում է, որ մանդատը չի, որ իրեն պետք է գեղեցկացնի: Մավրն ուզում է լինել ժողովրդի կողքին, դրա համար հեռացավ այդ ճահիճից»: (Մավրը Հ. Հովհաննիսյանն է: Մեր հարցին՝ եթե ճահիճ էր, ինչի՞ էիք ուզում հայտնվել այդ ճահճում՝ նա պատասխանեց՝ չգիտեր, որ պիտի ճահիճ դառնար. «ԱԺ միակ փոփոխությունն այն է, որ եկել են Վարդան Օսկանյանը եւ ՀԱԿ-ը»:

Մեր դիտարկմանը՝ միասնական շտաբում ՀԱԿ-ի հետ ջան-ջան էիք խաղում, իսկ այսօր ասում եք ՀԱԿ-ը «պաս» է՝ Հմայակ Հովհաննիսյանը հակադարձեց. «Չէ, ջան-ջան չէի ասում: Իրականում ես համաձայն չեմ, որ ցանկացած քաղաքական ուժ իր հեռանկարները խարսխում է ոչ թե իր սեփական անելիքների վրա, այլ մյուս ուժերի միջեւ եղած փոխհարաբերությունների»: Հմայակ Հովհաննիսյանը չհամաձայնեց, որ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանին հաջողվեց ԲՀԿ-ի ու ՀՀԿ-ի միջեւ սեպ խրել. «Ես չէի ասի, որ դա հաջողվեց անել Լեւո՛ն Տեր-Պետրոսյանին: Դա հաջողվեց անել մեկ ուրիշի. դե, գնացեք՝ մտածեք»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# Քաղաքական գործիչներն էլ են կռիվ-կռիվ խաղացել, ցոգոլ գողացել ու դասերը խափանել

Չնայած «Ժառանգության» անդամ Անահիտ Բախշյանի «բերանից մանուկ ժամանակ էլ եկել են», բայց նա իր ասելիքն ասել է: «Առավոտի» հետ զրույցում երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առիթով տիկին Բախշյանը եւ մի շարք այլ ճանաչված մարդիկ իրենց մանկության ամենավառ դրվագները հիշեցին:

«Դպրոցի հենց առաջին օրից մականունս ճստիկ դրեցին, քանի որ դասարանի ամենափոքրամարմինն էի: Նույնիսկ մինչեւ հիմա, երբ մանկական ընկերներով հավաքվում ենք, ինձ էլի ճստիկ են ասում: Ես երջանիկ մանկություն եմ ունեցել, իմ մեծ գերդաստանով ապրում էինք մի տան մեջ ու որպես առաջնեկ երեխա՝ չափից ավելի ուշադրության կենտրոնում էի»,- պատմեց Ա. Բախշյանը: Նա դեռ այն ժամանակվանից պայքարել է անարդարության դեմ. «Իմ ասելիքը միշտ ասել եմ, բայց այն ոչ միշտ է ողջունվել, հաճախ «բերանիս եկել են», սաստել են, որը ես չէի ուզենա: Եթե ես այս հասարակարգում լինեի էդ տարիքում, հնարավոր է՝ կյանքս այլ ընթացք ունենար: Ես ցանկացած երեխայի անհատականությունը հարգում եմ եւ կուզեի՝ ինձ էլ հարգեին»:

Կրթության եւ գիտության նախարարի պաշտոնակատար Արմեն Աշոտյանին լավ սովորելու համար փոքր ժամանակ «էլեկտրոնիկ» են ասել: «Երբ կտրվեցի երաժշտական դպրոցի քննություններից, ինձ մոտ առաջացել էր մի բարդույթ, որը հաղթահարելու համար ես որոշեցի միայնակ տիրապետել որեւէ երաժշտական գործիքի, եւ դա դաշնամուրն էր: Այդ անհաջողությունը դրդեց բավարարել քաղցը դեպի երաժշտություն»,- հիշեց նա: Պարոն Աշոտյանի մանկությունն անցել է Նոր Արեշ թաղամասում, որն իր բնութագրմամբ՝ շատ յուրահատուկ թաղ է եղել, քանի որ հիմնականում հայրենադարձներով էր բնակեցված: «Մինչեւ հիմա հիշում եմ թուլումբան ու փախլավաների տեսականիները: Հայրս միշտ ինձ համար հեծանիվ էր գնում, ինքն էլ ինքնուրույն տարբեր ավտոմեքենաների մասերից հավաքում էր մեքենաներ՝ կարտինգներ, ինձ համար էլ կարտինգ էր հավաքել, ունեի փոքրիկ մոտոցիկլետ, էլի հորս հավաքածն էր, ընկերներս հաճախ էին դիմում, որ տայի՝ քշեն: Դպրոցում լավ եմ սովորել, մեր թաղամասի ընկերներս գալիս էին մեր տուն՝ մաթեմատիկա պարապելու, բայց դա շատ շուտ վերածվում էր հերթական խաղի: Իսկ դասերի ժամանակ ընկերներս ինձնից արտագրում էին»: Ա. Աշոտյանի պատմելով՝ թաղի ամենամեծ այգին, որը պապն էր խնամում, իրենցն էր, եւ շատ մանուկների պես նա էլ է սիրել ցոգոլ գողանալ ու միանալով իր ընկերներին՝ հենց իրենց այգուց է գողացել: Մանկական խաղերից Արմեն Աշոտյանը հիշեց «ճտիկը»,



բայց ամենից շատ սիրել է «յոթքարը»:

Հայաստանի մարքսիստական կուսակցության ղեկավար Դավիթ Հակոբյանը երբեք բակում չի խաղացել: «Մայրս՝ Մարիա Մարտիրոսովնան, ինձ դաստիարակել է ասկետիզմի փիլիսոփայությամբ, ժուժկալության աստիճան սահմանափակ բոլոր հաճույքներից ու ազատություններից. ամեն մի վայրկյանն օգտագործել է նպատակասլաց: Երբեք դատարկ բակային մանկական խաժամուժի մեջ չեմ խաղացել: Պարապ-սարապ թրեւ գալու փոխարեն՝ կամ դուրս էի գալիս բնության մեջ պրագուլկաների, կամ գիրք կարդում, սպորտով զբաղվում եւ դասական երաժշտություն լսում»,- պատմեց մարքսիստը:

Երգչուհի, ԱԺ պատգամավոր Շուշան Պետրոսյանն էլ «բալերինա» չդարձավ, ինչպես որ երազում էր մանուկ ժամանակ, բայց դարձավ պատգամավոր:

«Դե, պատգամավորը այդպիսի գերխնդիր ու տաղանդ չէ, այսինքն՝ պետությունն է թելադրում ապրելու ձեւն ու գույնը: Ինչ վերաբերում է բալետին, դա միշտ էլ կմնա իմ սերը: Երբ 3 տարեկան էի, հայրս ինձ համար բերեց Մայա Պլիսեցկայայի դերձակուհու կարած բալետի հագուստը: Բոլոր հայտնի արվեստագետների առջեւ պարում էի Շառլ Գունոյի Ֆաուստի Վալպուրգյան գիշերի վերջին գործողությունը՝ ծայրից ծայր»,- հիշեց նա: Շուշանի մանկության հիշողության մեջ մի թեթեւ վիրավորանք է մնացել՝ պիոներ դժվարությամբ են ընդունել՝ դասը խանգարելու պատճառով:

«Ժառանգության» անդամ Ստյոպա Սաֆարյանի վառ հիշողությունները «դաժան կռիվ-կռիվ» խաղալու մասին էին: Նրա խոսքերով. «Նոյեմբերյանի Ոսկեվան գյուղում է անցել մանկությունս: Ու հաճախ հարեւան գյուղն էինք գնում՝ գետում լողալու: Լավ հիշում եմ՝ թաղ-թաղ կռիվ-կռիվ էինք խաղում, ինչ ձեռքներիս տակ ընկնում էր՝ օգտագործում էինք որպես զենք: Տուն էինք գալիս՝ մեկի հագուստը պատռված, մեկի գլուխը ճղված: Դպրոցում լավ եմ սովորել, քիմիայի դասն էի խափանում, ու այն վերածվում էր գզվռտոցի: Շատ արկածախնդիր էինք, չնայած մենք էլ ունեինք այգի, բայց անպայման գնում էինք հարեւանի ցոգոլներն էինք գողանում»:

Պատգամավոր Կարինե Աճեմյանը, լինելով երաժշտասեր մարդ, Ազգային ժողովի նիստերը նմանեցնում է տարբեր երաժշտությունների՝ դասականից մինչեւ «ռաբիս»: Նրա պատմելով. «Տանը ինչ պատահում էր՝ վրան նվագում էի, մինչեւ հայրս Մոսկվայից ինձ համար դաշնամուր բերեց: Ամենավառ հիշողությունս դրա հետ է կապված, լավ հիշում եմ, թե ինչ արագությամբ եմ դպրոցից հասա տուն, երբ իմացա, որ դաշնամուրս բերել են, անգամ դաշնամուրի հոտն եմ լավ հիշում: Շատ եմ սիրում երաժշտություն ու մինչեւ հիմա էլ նվագում եմ»:

«Ժառանգության» անդամ Զարուհի Փոստանջյանն էլ մանկության հիշողություններում մտաբերում է, թե ինչպես է մրցակցել եղբայրների հետ. «Ամենահետաքրքիր բանը, որ հիշում եմ մանկությունից, դա այն է, որ ինձանից 5 տարի մեծ եղբայրներիս համար հեծանիվ էին գնել, ինձ համար՝ ոչ: Ես էլ գողանում էի ու քշում»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Հնաբնակներն ընդդեմ Նալբանդյան 106/1-ի ակտիվիստների

«Մենք էլ ենք ուզում բարեկեցիկ ապրել: Երբ բակը լցնում էիք ավտոտնակներով, կանաչ տարածքների ու երեխաների խաղահրապարակի մասին չէի՞ք մտածում»,- ի պատասխան ակտիվիստների՝ ասում են իրացված տների բնակիչները:

«Այդ ցույց անող ու պայքարող բնակիչներից մեկը թող ձեռքը դնի խղճին ու ասի, որ գոնե մեկ բաժակ ջուր է լցրել այդ ծառերին կամ խնամել է: Ասում են՝ եթե այդ շենքը կառուցվի, իրենց շենքի սեյսմակայունությունը կտուժի, բայց իրենք իրենց 4 հարկանին դարձրել են 6 հարկանի, 6 հարկանին՝ 7 հարկանի, այդ ժամանակ չե՞ն մտածել սեյսմակայունության մասին: Հիմա իրենք ապրում են բարելավված պայմաններում, իսկ մեզ խոչընդոտում են: Մեր շենքը պետք է պատրաստ լիներ 3 տարուց, բայց 1 տարի տուժեցինք, քանի որ հարակից շենքերի բնակիչները խոչընդոտում են կառուցապատողին: Այդ նույն բնակիչներից յուրաքանչյուրն իր ավտոտնակի համար կառուցապատողից 7-10 միլիոն դրամ փոխհատուցում է ստացել, եւ այսօր այդ մարդիկ ստորագրում են, որ համաձայն չե՞ն այդ շենքի կառուցմանը. եթե համաձայն չէին, թող այն ժամանակ հրաժարվեին այդ գումարներից»,- ընդդեմ Նալբանդյան 106/1 հասցեում բողոքի ակցիաներ կազմակերպած ակտիվիստների՝ իր վրդովմունքը հայտնեց երեկ «Առավոտի» խմբագրություն եկած Թումանյան 18/5 հասցեի բնակիչ Լուսիկ Միրզոյանը: Տիկին Լուսիկի խոսքերով՝ այսօր մոտ 60 բնակիչ անտուն են եւ անհամբեր սպասում են իրենց բնակարանին, որոնք պետք է ստանան Նալբանդյան 106/1 հասցեում կառուցվող շենքից: Մեր խմբագրություն այցելած բնակիչները կառուցապատողից խնդրել եւ իրենց հետ բերել էին մի տրցակ փաստաթղթեր՝ կառուցվող շենքի նախագիծը, տարածքի նախկին վիճակի լուսանկարները, ծառերը հատելու եւ տեղափոխելու բնապահպանների թույլտվությունը, շինաշխատանքների օրինական





Նալբանդյան 106/1 բակը՝ այժմ եւ ապագա տեսքը՝ կառուցապատումից հետո:

լինելու մասին հավաստող փաստաթղթերը:

Ըստ մեր ձեռքի տակ եղած բնապահպանների մասնագիտական եզրակացության՝ կառուցապատող «Ավագ-Շին» ընկերությանը պարտավորեցվել է տարածքում եղած եւ շինաշխատանքների ժամանակ չվնասված ծառերը հողաթմբերով տեղափոխել այլ տարածք՝ վերատնկելու համար: Շինարարությունն ավարտելուց հետո էլ կառուցապատողը պարտավոր է բակը կանաչապատել Երեւանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության կողմից հաստատված դենդրոլոգիական նախագծի համաձայն:

Տիկին Լուսիկի խոսքերով՝ «Եթե կառուցապատողն իմ տունը քանդել է եւ իմ տան կողքին ծառ է եղել, պարզ չէ՞, որ այդ ծառի բունը կարող է եւ բացվեր: Իմ աչքն են մտցնում, թե տեսա՞ք՝ Արամի փողոցում ինչ եղավ, մարդկանց խաբեցին, բայց թող ինձ մատնացույց չանեն սրան-նրան, ես եմ, չէ՞, խաբվողը, եթե խաբեն, ինձ են խաբելու, իրենց ի՞նչ գործն է: Բայց ես հավատում եմ, ու եթե չխոչընդոտեն՝ մեր շենքը նորմալ կկառուցվի: Ես արդեն մեկ տարի է՝ վարձով եմ բնակվում, եւ կառուցապատողը մինչ այժմ պարտաճանաչ վճարում է մեր վարձերի գումարները: Բացի այդ, կառուցապատողը շատ մարդկային պայմաններով է մեզ փոխհատուցում. ով որքան քառակուսի ունի՝ այդքան էլ տալու է նորակառույց շենքում»:

Մեկ այլ բնակչի՝ Ագնեսա Միրզոյանի խոսքերով էլ. «1957 թվականից իմ հայրական տունն այդտեղ է, այսօր ովքեր որ բողոքում են, վերջին 20 տարին են ապրում այդտեղ: Այսօր այն բնակիչները, որոնք ակցիա են անում ու պայքարում են չորացած ծառերի համար, կարող եմ ասել՝ նրանց մեջ ընդամենը նախանձությունն է խոսում: Ասում են՝ մեր լույսը, ջուրը, երկինքը, օդը կփակի կառուցվող շենքը, բայց ոչինչ էլ չի փակում: Մեր կառուցապատողը շատ բարեհամբույր անձնավորություն է, որը բնակիչների պահանջով 3 անգամ նախագիծը փոխեց, որ որեւէ մեկը չտուժի, բայց այսօր բնակիչները առիթից օգտվելով՝ սկսեցին ավելի մեծ պահանջներ ներկայացնել: Կառուցվող շենքի հարկայնությունը մի քանի հարկով իջեցվեց, շենքն ընդամենը 7 հարկանի է լինելու, որի առաջին 2 հարկը մանկապարտեզ է, վերջին 7-րդ հարկը՝ մանսարդ: Ես հիշում եմ, որ 57 թվականից այդ տարածքում եղել են ակացիաներ եւ տաղավարներ, բայց երբ եկել են այս նոր բնակիչները, որոնք հիմա կանաչ տարածքների պահպանությունից, երեխաների խաղահրապարակից են խոսում, ամբողջ բակը ավտոտնակներով խեղդել են, 40 ավտոտնակ են դրել: Դե, պատկերացրեք՝ որքան ծառեր են հատել, որքան տաղավարներ են հանել:

Ուրեմն՝ ի՞նչ է նշանակում, այդ ժամանակ իրենց շահերից ելնելով՝ կանաչապատում, խաղահրապարակ հաշվի չառան, այսօր արդեն մեր շահերն է՝ հիշել են: Մենք էլ ենք ուզում բարելավել մեր պայմանները, քանի որ երկար տարիներ է՝ ապրում ենք խոնավ ու վատ պայմաններում, երեխաներ ու թոռներ ենք մեծացնում ու տարին տասներկու ամիս այդ հին տներում կարիճ ենք սատկացնում: Այստեղ ընդամենը նախանձությունն է խոսում, իրենց տեսադաշտը 2-3 տարի հետո շատ գեղեցիկ է լինելու, իսկ այսօր ինչի՞ նման է. կարկատված տանիքներով, խարխուլ տներով բակ: Նրանց «շնորհիվ» կառուցապատողը 1 տարի հետ է ընկել իր գործերից, եւ արդյունքում տուժում ենք մենք՝ բնակիչներս: Ով ուզում՝ տեղից վեր է կենում ու իր իրավունքներն է ներկայացնում մեր նկատմամբ, ամբողջ հարցն այն է, որ անօրինական ոչինչ չկա»:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 2.06.2012

# Հեգնել են Մարիամին, որը հետո... մահանալու էր

## Աշակերտները զգուշանում են ցուցմունքներ տալուց

Մայիսի 20-ին հայտնի դարձավ հիվանդանոցում արձանագրված մահվան հերթական դեպքի մասին: Այս անգամ զոհը 17-ամյա մի աշակերտ էր՝ Արամուս գյուղից, իսկ պատճառը ոտքի կոտրվածքն էր:

Լուրն անմիջապես մեծ տարածում ստացավ, քանզի տեղի ունեցածը արտառոց էր՝ մահ՝ ոտքի կոտրվածքի հետեւանքով:

Փորձեցինք պարզել դեպքի մանրամասները, եւ մի շարք հետաքրքիր հանգամանքներ ի հայտ եկան, մասնավորապես, կապված երեխայի մարմնական վնասվածքներ ստանալու պայմանների հետ, որը, կարծում ենք, Կոտայքի մարզպետարանին եւ կրթության նախարարությանը լուրջ մտորելու տեղիք պետք է տա: Իսկ առողջապահության նախարարության մասին էլ չենք խոսում: Եթե տարիներ առաջ կարելի էր հազվադեպ համարել բժիշկների դեմ հարուցվող քրեական գործերը, քանզի, ինչպես քննիչներն էին խոստովանում, բժիշկները միմյանց դեմ ցուցմունք չեն տալիս եւ սխալները չեն արձանագրում, ապա այսօր չենք հասցնում հետեւել լրահոսին, ինչն ուղղակի վկայությունն է բժիշկների մասնագիտական անփութության ու անգրագիտության: Այս թեմային դեռ կանդրադառնանք, իսկ հիմա ներկայացնենք, թե ինչ պարզեցինք Մարիամի ստացած կոտրվածքի պայմանների մասին:

Մայիսի 18-ին Կոտայքի մարզի Արամուս գյուղի միջնակարգ դպրոցում անց է կացվել 12-րդ դասարանի ֆիզկուլտուրա առարկայի ավարտական քննությունը: Հանձնաժողովում ընդգրկված են եղել նաեւ դպրոցի տնօրեն Սամվել Զոհրաբյանը, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Նորայր Ստեփանյանը:

Քննությունն անց է կացվել առանց նախապես՝ դասաժամերին նախապատրաստական վարժություններ, պարապմունքներ անցկացնելու, քննության օրը՝ նախքան քննությունը առանց նախավարժանք կատարելու:



Ֆիզկուլտուրայի ուսուցիչը քննության ընթացքում գտնվել է «ավարտ» գծի մոտ եւ հրահանգել է վազքի սկիզբն ու միաժամանակ վայրկյանաչափով արձանագրել վազքի տեւողությունը, իսկ տնօրենը՝ նստած «ավարտ» գծի հարեւանությամբ գտնվող սեղանի մոտ: Քննության շրջանակներում ներառված է եղել նաեւ «30 մետր արագ վազք» նորմատիվը, եւ աշակերտներն ըստ մատյանների համարների հանձնել են այն:

Դպրոցի աշակերտուհի, նույն գյուղի բնակչուհի Մարիամ Արշակյանը վազել է երկրորդը: Երեխաների ներկայացրածի համաձայն՝ վազքը դեռ չավարտած՝ «ավարտ» գծին չհասած, կորցնելով հավասարակշռությունը, Մարիամը վայր է ընկել, սակայն ոչ ուսուցիչը եւ ոչ էլ տնօրենը չեն շտապել նրան ցուցաբերել օգնություն կամ գոնե հետաքրքրվել նրա որպիսությամբ: Հետեւապես, զարմանալ, որ քննությունը չի ընդհատվել, ուղղակի անիմաստ է: Սառը անտարբերությամբ դասարանի տղաներին հանձնարարել են Մարիամին հեռացնել վազքուղուց՝ քննությունը շարունակելու նպատակով: Դասընկերների վկայությամբ՝ մոտ 30 րոպե շարունակ Մարիամ Արշակյանը գտնվել է վազքուղու հարեւանությամբ, հատակին, իսկ տնօրենն ու ֆիզկուլտուրայի ուսուցիչը շարունակել են անցկացնել քննությունը, դեռ ավելին՝ հեգնանքով Մարիամ Արշակյանին ասել են. «Հերիք է դերասանություն անես, ոչինչ էլ չի պատահել»:

Չդիմանալով ցավին՝ Մարիամ Արշակյանն սկսել է արտասվել, ինչը տեսնելով դպրոցի ուսուցիչ Անդրեյ Փիլիպոսյանը՝ փորձել է զանգահարել շտապօգնություն, սակայն դա նրան չի հաջողվել: Այդ ընթացքում Մարիամ Արշակյանի համադասարանցի տղաներից մեկն իր բջջային հեռախոսով զանգել է շտապօգնություն, հեռախոսը փոխանցել Փիլիպոսյանին, ով հրավիրել է բուժանձնակազմ: Մոտ 15-20 րոպե անց դպրոցի բակ է հասել շտապօգնության ավտոմեքենան եւ «ձախ ազդրի կոտրվածք» ախտորոշմամբ՝ Մարիամին տեղափոխել է «Աբովյան» բժշկական կենտրոն:

Մայիսի 20-ին, ժամը 22-ի սահմաններում, Մարիամ Արշակյանը «Աբովյան ԲԿ» ՓԲԸ-ում ստացիոնար բուժման ընթացքում «ճարպային էմբոլիա» ախտորոշմամբ մահացել է:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, եւ քննիչները Մարիամ Արշակյանի դասընկերներին սկսել են հրավիրել հարցաքննության: Սակայն մեր ունեցած տեղեկություններով, տնօրենն ու ուսուցիչն ամեն ինչ անում են՝ դեպքերի իրական զարգացումը թաքցնելու ուղղությամբ, իսկ նախաքննական մարմինն էլ առանձնապես մեծ ջանասիրություն չի ցուցաբերում աշակերտներին մանկավարժների ճնշումներից զերծ պահելու եւ օբյեկտիվ իրականությունը բացահայտելու ուղղությամբ: Մասնավորապես, ինչպես պատմեցին երեխաները, որոնց անունները հասկանալի պատճառներով չենք հրապարակում, դպրոցի տնօրեն Սամվել Զոհրաբյանն ու ֆիզկուլտուրայի ուսուցիչ Նորայր Ստեփանյանը դասղեկի միջոցով տնօրենի աշխատասենյակ են հրավիրել Մարիամի համադասարանցիներին եւ պահանջել հարցաքննության ժամանակ չասել, որ Մարիամին անմիջապես չի ցուցաբերվել օգնություն կամ որ քննությունը շարունակվել է: Փոխարենը՝ ասել են, որ քննիչներին «պատմեն», թե իբր Մարիամի վայր ընկնելուց անմիջապես հետո մանկավարժներն անհանգստացած մոտեցել եւ օգնություն են ցույց տվել, իբր տնօրենն անձամբ զանգահարել եւ կանչել է շտապօգնություն: Աշակերտները հիմնականում մանկավարժների հրահանգը կատարել են եւ տվել այն ցուցմունքը, ինչն իրենցից ակնկալվում էր, թեեւ իրականությունը գիտեն բոլորը, սակայն դա, կարծես թե, նախաքննական մարմնին այնքան էլ հետաքրքիր չէ: Ի դեպ, տնօրենն ու ուսուցիչը շարունակում են պաշտոնավարել, եւ նրանց լիազորությունները ոչ ոք չի դադարեցրել: Ավելի ճիշտ՝ նման հարց ոչ ոք, այդ թվում՝ նախաքննական մարմինը, չի բարձրացրել: Նշենք, որ, օրինակ, երբ քննվում է նույն քննիչի կամ դատախազի վերաբերյալ գործ, ապա գոնե առերեւույթ օբյեկտիվությունն ապահովելու նպատակով ժամանակավորապես դադարեցվում են նրանց լիազորությունները: Բայց հատկապես Կոտայքի մարզի ուսումնական հաստատություններում բարքերն ու վարքերն այլ են, այնտեղ բոլորն անձեռնմխելի են: Էլ չենք խոսում բուժանձնակազմի մասին, որոնց «գերհոգատար» վերաբերմունքի պատճառով ընդհատվեց 17 տարեկան մի աղջկա կյանք, ով ուներ բոլոր տվյալները օպերայի մեծ երգչուհի դառնալու համար: Համենայնդեպս, այսպես էին կարծում նրա հետ աշխատող վոկալի ուսուցիչները:

Գործի վարույթը գտնվում է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Վկան դիմել է դատարան՝ լրացուցիչ հարցաքննվելու խնդրանքով

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում (դատավոր՝ Ալեքսանդր Ազարյան) շարունակվում է Նարեգ Հարթունյանի, Արթուր Գալստյանի եւ Անի Մնացականյանի դեմ հարուցված քրեական գործով դատաքննությունը:

Մեղադրանքի կողմը (դատախազ՝ Պետրոսյան) մեղադրում է «Ջի Էյջ Ստորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության հիմնադիր-սեփականատեր Գարաբեդ Հարթունյանի որդուն՝ Նարեգ Հարթունյանին, որ նա 2009թ. օգոստոսից մինչեւ 2010թ. սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում փաստացի ղեկավարել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչությունում հաշվառված «Ջի Էյջ Ստորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության գործունեությունը եւ կազմակերպել է ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի կողմից ընկերության հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում եւ հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով՝ 25.278.175 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց խուսափել:

2010թ. սեպտեմբերի 11-ից, հանդիսանալով ընկերության տնօրեն, Նարեգ Հարթունյանը ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի եւ գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում եւ հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով շարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ 38.373.127 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

Նախորդ դատական նիստում հանդես է եկել վկա, «Ջի Էյջ Ստորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության նախկին գլխավոր հաշվապահ Արսեն Արտաշիսյանը:

Վերջինն «Առավոտի» հետ զրույցի ժամանակ տեղեկացրեց, որ օրեր առաջ դիմել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան, որպեսզի մեկ անգամ եւս վկայություն տա:

Հունիսի 6-ին նշանակված դատական նիստի ժամանակ հավանաբար քննարկվի վկայի լրացուցիչ վկայություն տալու նպատակահարմարության հարցը:

Ա. Արտաշիսյանն ասաց, որ 2010թ. հոկտեմբերից մինչ 2011թ. ապրիլը եղել է նշված ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահը:

Դատական նիստի ժամանակ, ըստ վկայի, իր վրա Նարեգ Հարթունյանի կողմից եղավ հոգեբանական ճնշում, ինչի պատճառով ինքը չի կարողացել լիարժեք ցուցմունք տալ, պնդել նախաքննության ժամանակ տրված իր ցուցմունքը.

«Դատավարության ժամանակ չկարողացա արտահայտվել: Նարեգ Հարթունյանն ասաց, թե Ամերիկայում իմ նմաններին լիցենզիայից կզրկեին՝ ոչ ճիշտ վկայություններ տալու համար, սակայն այն, ինչ ասել եմ, հայտնի է ՍՊ ընկերության բոլոր աշխատակիցներին»:

Ա. Արտաշիսյանն ասաց, որ դատարան կգնա իր փաստաբանի միջոցով, քանի որ մինչ այդ տեղյակ չի եղել, թե կարող է ստանալ իրավաբանական օգնություն:

Ա. Արտաշիսյանը նախաքննության ժամանակ տեղեկացրել էր, որ փաստացի



ստացել է 300 000 ՀՀ դրամ գումար, սակայն հաշվապահորեն ձեւակերպված է եղել 50 000 ՀՀ դրամ գումար.

«Ընկերության մյուս աշխատակիցների դեպքում էլ նույնն էր: Երբ Նարեգ Հարթունյանի հետ առերեսման ժամանակ հարցրեցին աշխատավարձի հետ կապված, նա ասաց, թե տեղյակ չի եղել: Երբ ես ասացի, թե մենք այդ հարցը քննարկել ենք բազմաթիվ անգամներ, նա ասաց՝ միգուցե, ասել եք, չեմ հիշում»:

Վկան նաեւ ակնարկեց մաքրածախ առեւտրի մասին. «Ապրանքները վաճառվում էին 20 տոկոս ավելի էժան, քան մեծածախի դեպքում»:

Մինչդեռ, ըստ վկայի, «բազում անգամ Նարեգի հետ իր սենյակում քննարկումներ են եղել, թե հարկայինի հետ կապված խնդիրներ ունենք, որ փաստացի մեծածախ առեւտուր է իրականացվում, որը հարկերի թաքցմանն է տանում, որ պիտի ուղղվի: Նարեգն ասում էր ամեն անգամ, ինչ ասում ենք, այդպես արա կամ՝ կուղղվի հաջորդ ամսվանից»:

Վկան հայտնեց, որ նկատելով, որ մտադրություն չկա, թե ՍՊ ընկերությունում ինչ-որ բան կփոխվի, ստիպված դիմում է գրել աշխատանքից ազատվելու համար:

Ավելացված արժեքի հաշվետվությունները պատրաստելուց հետո, ըստ վկայի, նկատել է. «բավականին մեծ ավելացված արժեքի հարկ: Մեր միջեւ լարվածություն առաջացավ: Ես ասացի, որ դուք ինձ ընդունել եք աշխատանքի, որպեսզի օրենքով աշխատեմ, բայց խաբվել եմ, քանի որ նա մտադրություն չուներ օրենքով աշխատելու»:

Ի դեպ, դատարանում մի քանի վկաների, որոնք նախկինում զբաղվել են հաշվապահական գործունեությամբ, տրվում էր այս հարցը. Դուք առնչվե՞լ եք ՀԴՄ-ների հետ: Նույն հարցն ուղղեցի զրուցակցիս: Ա. Արտաշիսյանն ասաց. «ՀԴՄ-ն ես չեմ օգտագործել: Արթուրն էր (ամբաստանյալը) օգտվում: Երբ գործն ընդունեցի, նկատեցի, որ 20 տոկոս գների միջեւ տարբերություն կա, երբ որ ապրանքներ ներմուծվեց, ինքնարժեքը հաշվեցինք, զգացինք, որ տարբերություն կար: Ստացվեց, որ մենք հարկեր ենք թաքցնում: Ինձ միշտ օրվա վերջին բերել են իքս-հաշիվը, ՀԴՄ-ն առկա»:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Մշակույթի վաստակավոր գործիչները շոյված են


Լիլիթ Հակոբյան


Հասմիկ Կարապետյան


Մարինե Օթարյան

«Առավոտը» որոշ մշակութային օջախների տնօրեններին, ովքեր ստացել են ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչում, դիմեց հարցով՝ արդյոք իրադարձությո՞ւն է իրենց կյանքում կոչման արժանանալը եւ ի՞նչ կտա այն:

Ե. Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյան.- Նվիրումով աշխատում եմ ու, բնականաբար, սիրում գործս: Երբեք չեմ մտածել պարգեւ ստանալու մասին, բայց երբ ճիշտ է գնահատվում աշխատանքդ՝ ուրախալի է ու ոգեւորող, մանավանդ՝ երբ պարգեւը ստանում ես հանրապետության նախագահի ձեռքից, ինչը առավել պարտավորեցնող է: Շնորհավորանքներ եմ ստացել ոչ միայն հարազատներից, մտերիմներից, այլեւ արտերկրից: Պատկերացնո՞ւմ եք՝ նույնիսկ անծանոթներից... Սա ինձ համար գնահատական է 43 տարվա ստեղծագործական աշխատանքի եւ, ինչու չէ՝ նույնիսկ պարծենալու առիթ է տալիս:

Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյան.- Աշխատանքային-մշակութային գործունեությանս սկիզբը կապվում է մեր երիտասարդ պետության սկզբնավորման հետ: Իսկապես անցել եմ ոչ հարթ ճանապարհ: Հանդիպել եմ մարդկանց, ովքեր «ատրես» գնահատականով քաջալերել են ինձ, ինչը ամրապնդել է հողիս ամուր կապից ժառանգած անուղղելի լավատեսությունս ու պայքարելու համառությունս: Այսօր ինձ, փաստորեն, «ատրես» ասաց երիտասարդ պետությունս:

Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի տնօրեն Հասմիկ Կարապետյան.- Պարգեւն ինձ տալիս է ապրած ու ստեղծագործած տարիների լիարժեքություն: Գրադարանի անվանն էլ այն տալիս է նոր հնչեղություն, քանի որ այդ կոչումը համարում եմ յուրաքանչյուր աշխատակցի վաստակի գնահատականը: Գտնում եմ, որ բարձր պարգեւի արժանանալը իրադարձություն է ցանկացած մասնագետի համար, եւ ես էլ այդ առումով բացառություն չեմ:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Հայ աստղերը «հոթ-դոգ» պատրաստեցին երեխաների համար

Երեկ երեխաների պաշտպանության միջազգային օրը յուրօրինակ ձեւով նշվեց «Օրրանում»: Վերջինս «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի հետ համատեղ գունեղ միջոցառում էր կազմակերպել կարիքավոր եւ հաշմանդամ երեխաների համար: Սկսած ժամը 14-ից, «Արմենիա Մարիոթի» շեֆ-խոհարար Ռոլֆը հայ աստղերի հետ միասին «հոթդոգ», համբուրգեր եւ աղցաններ էր պատրաստում փոքրիկների համար:

«Արմենիա Մարիոթի» գլխավոր տնօրեն Ամիր Միրոնը ասաց, որ զգացված է երեխաների ժպիտներից՝ եւս մեկ անգամ ընդգծելով սոցիալական պատասխանատվության կարեւորությունը Հայաստանում: Ինչ վերաբերում է «Օրրան» բարեգործական կազմակերպության հիմնադիր Արմինե Հովհաննիսյանին, նա գիտի՝ ինչպես տոն ստեղծել երեխաների համար:





ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

## Մրցանակակիր ֆիլմերը կմասնակցեն «Ոսկե ծիրանին»

Երեկ «Գոլդեն թյուլիփ Երեւան» հյուրանոցում «Ոսկե ծիրան» կինոփառատոնի ծրագրերի տնօրեն Միքայել Ստամբոլցյանը, գեղարվեստական տնօրեն Սուսաննա Հարությունյանը եւ միջազգային բաժնի ղեկավար Տաթեւիկ Մանուկյանը խոսեցին փառատոնի արտամրցութային ծրագրերից՝ «Երեւանյան պրեմիերաներ», «Հարգանքի տուրք» եւ «Հետահայաց ցուցադրություններ»: «Երեւանյան պրեմիերաներ» ծրագրում, ի թիվս այլ ֆիլմերի, ընդգրկված են Վիկտոր Կոսակովսկու «Կեցցեն հակապատկերները», որ Վենետիկի կինոփառատոնի բացման ֆիլմն էր 2011-ին, այս տարվա «Օսկարի» հինգ նոմինանտներից՝ Ագնեշկա Հոլանդի «Խավարումը», Ֆրանսիս Ֆորդ Կոպոլլայի «Միջեւը» եւ այլն:

Խոսելով Ագնեշկա Հոլանդի մասին, պարոն Ստամբոլցյանը նշեց, որ դա այն ռեժիսորն է, որն ավարտել է ոչ թե լեհական հայտնի Լոձի դպրոցը, այլ սովորել Պրագայում, եւ ավելի շատ ինտերնացիոնալ ռեժիսոր է, որը կրում է, այսպես ասած, «չեխական գարնան» ազդեցությունը: Ավելին, նա արվեստագետ է, որը կարողացել է հարմարվել Հոլիվուդում աշխատելուն:

Ռուսական կինոյի ամենաանկախ ռեժիսորներից մեկի՝ Վադիմ Աբդրաշիտովի մասին էլ Ստամբոլցյանն ասաց, որ նա «Ոսկե ծիրան» կինոփառատոնի կողմից՝ Կինոյի վարպետ մրցանակի կարժանանա: Ինչ վերաբերում է ռուսական եւ բազմաթիվ հեղինակավոր միջազգային մրցանակների դափնեկիր Ալեքսանդր Սոկուրովին, որին Եվրոպական կինոակադեմիան դասում է համաշխարհային կինոյի 100 լավագույն ռեժիսորների թվում, նա էլ մի նոր պարգեւ կստանա Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ՝ հոգեւոր արժեքներին դավանելու համար:

«Ոսկե ծիրանի» գեղարվեստական տնօրեն Սուսաննա Հարությունյանը նշեց, որ այս պահին բանակցություններ են գնում Կաննի կինոփառատոնի լավագույն ֆիլմերը Հայաստան բերելու ուղղությամբ:

«Ոսկե ծիրանի» այս տարվա բոլոր, նաեւ արտամրցութային ծրագրերը հարուստ են ու գրավիչ, ինչ վերաբերում է «Հարգանքի տուրքին», վերջինիս շրջանակներում կնշվեն Յուրի Երզնկյանի, Ֆրունզե Դովլաթյանի եւ Անդրեյ Տարկովսկու հոբելյանները:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Հայի միտքը» չի հակակշռվի մյուս համահայկական կառույցներին

89 տարբեր մասնագիտություններ ունեցող վաստակաշատ մտավորականներ մայիսի 31-ին՝ Մշակութային արժեքների պաշտպանության միջազգային օրը, որոշեցին սկսել մի նոր համահայկական շարժում: Նորաստեղծ հ/կ-ն կոչվում է «Հայի միտք» համահայկական ակումբ:

«Առավոտը» պարզեց, որ ակումբի կազմավորման առաջին հրավերը եղել էր դեռեւս ապրիլի 26 ին, իսկ մայիսի 31 ին, մինչ հերթական ընդհանուր հավաքը, մեկ ամսվա ընթացքում արդեն լուծվել էին մի քանի խնդիրներ, որոնք ամուր հիմք են ստեղծում ակումբի երկարատեւ գործունեության համար:

«Առնո Բաբաջանյան» համերգասրահում ակումբի նախագահ ընտրված Գագիկ Մանասյանի կողմից արդեն պատկացած է մի ամբողջ հարկաբաժին, որտեղ կառույցը իր՝ տարբեր ոլորտների բաժանված թեմատիկ աշխատանքային խմբերով կարող է ծավալել ամենօրյա ու շուրջօրյա գործունեություն: Ակումբը մտադիր է Հայաստանից «մտավոր» աշխատանքային կապ հաստատել ողջ հայության հետ:

Նորաստեղծ ակումբի նախաձեռնող Մարինե Վահրադյանից «Առավոտը» հետաքրքրվեց, թե իրենք փորձո՞ւմ են համահայկական մյուս կառույցներին լրացնել, թե՞ ստեղծելու են եղածների հակակշիռը: «Որեւէ մեկին հակակշռվելու խնդիր չկա: Բոլորս էլ տեսնում ենք, որ անտեսվում է այն, ինչից հարուստ ենք ու ճակատագրի բերումով աշխարհասփյուռ հայությունը՝ համաշխարհային ներդրած արժեքներով, նույնիսկ նկատված չէ հայրենիքում: Կապվել եմ արտերկրում բնակվող ու գործունեություն ծավալող հայ մտավորականների հետ, որոնք իմանալով, որ սկսվում է հայ մտավորական մտքի ինտեգրման գործընթաց, սիրով արձագանքեցին՝ պատրաստակամություն հայտնելով իրենց դերն ունենալ այս գործում: Կարճ ասած՝ մեր ակումբի նպատակը ներկայացնեմ Ռաֆայել Պատկանյանի հայտնի բանաստեղծության հետեւյալ տողերով. «Քաջ ես, լըսել ենք, ինքըդ մեծավոր: Անուն հաղթողի ունես փառավոր, բայց թե թըրեդ շահ չունի Հայաստան, թքել եմ քու ալ, թըրիդ ալ վըրան...»:

Ակումբի նախագահ, Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն Գագիկ Մանասյանն էլ հարցին, թե մշակութային ոլորտի փորձառու գործիչը ի՞նչ նոր որակ է ակնկալում այս կառույցից, հակիրճ պատասխանեց. «Մեր գերխնդիրը աշխարհասփյուռ հայության ստեղծագործ ու փառաբանված միտքը հայրենիքին ծառայեցնելն է»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

VIVACELL MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Մեկնարկում է հայ-ֆրանսիական հերթական հեծանվային արշավը



Հայաստանի հեծանվային սպորտի ֆեդերացիայում իրենց մասնագիտությանը նվիրված մարդիկ են աշխատում, որոնք նաեւ իրենց ազատ ժամանակն են տրամադրում հեծանվային սպորտի զարգացմանը՝ կազմակերպելով տարբեր տեսակի միջոցառումներ:

Դրանցից մեկն էլ արդեն ավանդական դարձած հայ-ֆրանսիական հեծանվային արշավն է Հայաստանի ողջ տարածքով, որն այս տարի կազմակերպվելու է 7-րդ անգամ: Երկու տարին մեկ՝ տարվա այս եղանակին Հայաստան են գալիս Պա դե Կալե նահանգի մանկատների ասոցիացիայի եւ դժվար դաստիարակվող երեխաների դպրոցների սաները եւ խումբ կազմելով հիմնականում Վանաձորի նմանատիպ հաստատության 10-15 տարեկան աղջիկների, Երեւանի ու մեր Ֆեդերացիայի մարզիկների հետ եւ ուղեկցորդների, հրահանգիչների, բժիշկների եւ սպասարկող անձնակազմի հետ միասին մոտ 60 հոգանոց խմբով 12-օրյա հեծանվային արշավի են ելնում հանրապետության տարբեր երթուղիներով: Այս նախաձեռնության հիմնադիրներից եւ կազմակերպիչներից Աշոտ Կորկոտյանը «Առավոտին» պատմեց, որ համապատասխան մասնագետների հետ երթուղիները գլխավորապես ընտրվում են դժվարանցանելի վայրերով՝ անտառներով, լեռնանցքներով, սարերով. «Արշավի մասնակիցները հեծանիվներով հաղթահարում են նույնիսկ 2300 մետր բարձրություն ունեցող ճանապարհները: Հայ եւ Ֆրանսիացի պատանիները լինում են պատմամշակութային կոթողներում, որոնցով այնքան հարուստ է մեր երկիրը, Հայաստանի բնության տեսարժան վայրերում, նաեւ ծանոթանում ամենահեռավոր ու բարձրադիր գյուղերում բնակվող մարդկանց կենցաղին: Ի դեպ, արշավի ողջ ընթացքում մասնակիցների սնունդը կազմակերպում է «Ավարայր» տուրիստական կազմակերպությունը: Այդպես նրանք ճանաչում են մեր անցյալն ու ներկան, մտերմանում բնությանը, սովորում սիրել եւ պահպանել այն»:

Այդ 12 օրերին, որոնք հայ եւ ֆրանսիացի երեխաները ճանապարհներին ու վրանային ճամբարներում անցկացնում են իրար հետ, նրանց մտերմացնում է, իսկ դժվարությունները, որ հաղթահարում են միասնական ջանքերով, օգնում է հետագայում ճիշտ մարդկային հարաբերություններ հաստատել շրջապատի հետ: «Անկեղծ ասած, երեխաներն արշավների ավարտին մի քիչ հոգնածության զգացում են ունենում: Բայց դա աշխատած ու հաճելի հոգնածություն է,- շարունակում է Աշոտ Կորկոտյանը:- Հաճախ եմ վերջում հետաքրքրվել նրանց տպավորություններով: Եվ անխտիր բոլորն էլ պատասխանել են, որ թեեւ դժվար էր, բայց դրանք իրենց կյանքի ամենատպավորիչ ու հիշարժան օրերն են»: Հարցին, թե այս տարի ավանդույթը շարունակվելո՞ւ է, պարոն Կորկոտյանը պատասխանեց. «Իհարկե: Արդեն հունիսի 4-ին սպասում ենք ֆրանսիական կողմից մեր համատեղ այս ծրագրի մշակողներ եւ ֆինանսավորողներ Ֆրանսիս Դեմբոտի եւ Դոմինիկ Դեմորի ուղեկցությամբ հերթական խմբի ժամանմանը»:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

## «ՀՖՖ/Կոկա-Կոլա գավաթ 2012»-ը կվիճարկեն Գյումրին եւ Մարտունին



Երեւանի կենտրոնի բակերից մեկում կայացած կիսաեզրափակիչ հանդիպումներում Գյումրիի թիվ 15 դպրոցի թիմը 20:4 խոշոր հաշվով հաղթեց Գորիսի թիվ 6 դպրոցին, իսկ Մարտունու թիվ 3 դպրոցը համառ պայքարում 8:7 հաշվով առավելության հասավ Հրազդանի թիվ 11 դպրոցի նկատմամբ: Այսպիսով, հունիսի 3-ին «Փյունիկ» ՄԱ խաղադաշտում հաղթող թիմերը կպայքարեն գլխավոր մրցանակի՝ «ՀՖՖ/Կոկա-Կոլա 2012» գավաթի եւ ոսկե մեդալների համար, իսկ պարտվողները կորոշեն 3-րդ մրցանակակրին: Չեմպիոնի կոչումը նվաճած եւ մրցանակային տեղերը գրաված թիմերի յուրաքանչյուր խաղացողի «Կոկա-Կոլան» կպարգեւատրի նաեւ թանկարժեք նվերներով՝ նեթբուքերով, թվային ֆոտոխցիկներով, MP3 ձայնարկիչներով, «Adidas» մարզահագուստով եւ գնդակներով, մարզական պայուսակով եւ այլն:

ՀՖՖ-ի եւ «Կոկա-Կոլա» համակարգի համատեղ կազմակերպվող ավանդական այս առաջնությունը կարեւոր խթան է մարզաձեւը Հայաստանի հատկապես մարզային միջնակարգ դպրոցներում ֆուտբոլային մարզումներում ներգրավել դպրոցահասակ այն երեխաներին, որոնք չեն հաճախում ֆուտբոլային խմբակներ կամ մարզադպրոց: Իսկ նրանց մեջ, անկասկած, տաղանդավոր երեխաներ անպայման կան: Եվ պիտի ասել, որ նպատակն իրականանում է: Այս էլ երկրորդ տարին անընդմեջ մրցանակային տեղերի համար պայքարում Երեւանի դպրոցները բացակայում են, թեեւ նախնական փուլում մեկնարկած թիմերի մեծ մասը հենց մայրաքաղաքի դպրոցական թիմերն են լինում: Իսկ դա արդեն վկայում է, որ մարզերում մանկապատանեկան ֆուտբոլը արագ է տարածվում ու զարգանում: Երկրորդ, առաջնության կանոնակարգի պարտադիր կետերից է, որ յուրաքանչյուր թիմի ութ խաղացողներից երեքը պետք է աղջիկ լինի: Հուսանք, որ սա էլ առիթ կդառնա մեզանում կանանց ֆուտբոլը զարգացնելու համար:

Ա. Հ.

## Քննակենտրոնում ծնողները անջատել են մոնիտորը

Երեկ Հայաստանի բոլոր մարզերում ձեւավորված քննակենտրոններում դիմորդները քննություն հանձնեցին կենսաբանություն (1938 դիմորդ), աշխարհագրություն (392 դիմորդ) եւ ընդհանուր պատմություն (397 դիմորդ) առարկաներից: Ըստ դիմորդների թվի՝ Հայաստանի յուրաքանչյուր մարզում, բացի Սյունիքից, ձեւավորվել էին մեկական քննական կենտրոններ, Սյունիքում եւ Երեւանում երկուական քննակենտրոններ կային:

Նախքան քննական մեկնարկը՝ ԳԹԿ կենտրոնի խորհրդի կողմից տրվեց առաջին դրական գնահատականը: Խորհրդի անդամները եւ նախագահը շրջայց կատարեցին Երեւանի թիվ 189 ավագ դպրոցում ձեւավորված քննակենտրոնում: Նրանք նշեցին, որ լավ է կազմակերպված ամեն ինչ. նույնիսկ փողոցներում, մայթեզրերին ուղեսլաքներ էին փակցված, որպեսզի դիմորդները հեշտությամբ գտնեին քննակենտրոնը: ԳԹԿ խորհրդի կողմից որոշվեց, որ թիվ 189 ավագ դպրոցն այսուհետեւ դառնալու է հիմնական քննակենտրոններից մեկը: Այդ դպրոցի տնօրեն Սերգեյ Պետրոսյանը նշեց, որ քննակենտրոնը ձեւավորվել է բոլոր պահանջներին եւ չափանիշներին համապատասխան, բոլոր քննասենյակներում տեղադրվել են տեսախցիկներ, որոնք մոնիտորներին են փոխանցում քննասենյակում տիրող վիճակը: Այս քննակենտրոնում (ղեկավար՝ Էդուարդ Սանթրոսյան) քննության կազմակերպիչների հիմնական մտահոգությունն այն էր, որ քննության ընթացքին հետեւող ծնողներն աղմկում էին մոնիտորների առջեւ: Բանը հասավ նաեւ զավեշտի, երբ ծնողներից մեկը, ձանձրանալով հետեւել մոնիտորից սփռվող քննապատկերին, որոշեց «փոխել» ալիքները, եւ արդյունքում՝ անջատեց սարքը: Իսկ մեկ այլ ծնող տեղեկացրեց, որ երեկ չի հասցրել դիտել «Հրեշտակների դպրոց» սերիալը, առաջարկեց քննասերիալը դիտելու փոխարեն միացնել իր ուզածը:

Այս քննակենտրոնում քննություն հանձնելու համար գրանցված էր 320 դիմորդ, նրանցից քննությանը չէր ներկայացել 14-ը: Սահմանված ժամին թեստերը բացվեցին, ու քննությունը մեկնարկեց:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Փակ շուկայի սեփականատերը համաձայնել է վերակառուցել քանդածը



Երեկ Հանրային խորհրդի մշակույթի ենթահանձնաժողովի նիստում քննարկվեց Երեւանի Փակ շուկայի հարցը: Նիստը վարեց Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը, որը նկատեց, թե վերջին շրջանում կարծես օրինաչափություն է որոշակի շինությունների քանդումը կամ կառուցումը, ինչը հասարակական արձագանքի տեղիք է տալիս. «Մենք շնորհակալ ենք երեւանցիներից, որ ուշադիր գտնվեցին Փակ շուկայի խնդրին՝ հերքելով այն տարածված կարծիքը, թե իշխանությունների «դեմը խաղ չկա»: Փակ շուկան մտնում է պահպանվող հուշարձանների ցուցակի մեջ եւ դրա սիմվոլիկ լինելն անվիճելի փաստ է: Եթե այն քանդվում է առանց հաստատված նախագծի, ուրեմն հանցագործություն է կատարվում»:

Նշենք, որ քաղաքաշինության եւ մշակույթի նախարարության կողմից ստեղծվել էր խնդրով զբաղվող հանձնաժողով, որի ղեկավարում է Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը: Նա նշեց, որ Փակ շուկան ի սկզբանե ներգրավված է եղել պահպանվող հուշարձանների ցանկում. «Երբ վաճառում են մշակութային հուշարձանների ցանկում գտնվող հուշարձանը, սեփականատիրոջը պարտավորագրով ներկայացնում են նրա իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում եւ այն, որ նա իրավունք չունի փոխել կամ քանդել հուշարձանը: Օրենքները բավարար են՝ կարգը պահպանելու համար, սակայն այլ հարց է, երբ դրանք չեն գործում»:

Մ. Մինասյանը նաեւ նշեց, որ վերոհիշյալ պարտավորագիրը չի ներկայացվել շուկայի նախկին սեփականատիրոջը, իսկ ներկայիս սեփականատերն էլ չի իմացել դրա մասին. «Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ սեփականատերը պետք է ամրացնի շուկայի եղած մասը, իսկ քանդվածը՝ վերակառուցի, ինչը միանգամայն հնարավոր է»:

Չնայած այն հանգամանքին, որ Փակ շուկան երբեւէ չի վերանորոգվել, «Հայնախագիծ» ընկերության տնօրեն Գրիգոր Ազիզյանը նշեց, որ քանդված մասը կարելի է համապատասխան միջոցառումներով հարմարեցնել գործող նորմերին. «Քանդված մասում 8 մետր խորությամբ փոսորակ կար, որը, սակայն, չի վնասել շենքի կայունությանը: Սեփականատերը բանավոր համաձայնություն է տվել, որպեսզի իրեն ներկայացվի նախագիծ, ըստ դրա էլ նա կպարտավորվի ամրապնդել շուկայի եղած մասը եւ կառուցել քանդածը»:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ